ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՉԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ուսուցչի կողմից սովորողների ուսուցման պլանավորումը՝ համագործակցային ուսումնառության մեթոդով

Առարկա՝ Պատմություն

Անցկացման վայր՝ Վարդենիս

Աշխատանքի ղեկավար՝ Հասմիկ Բեյբության

Ուսուցիչ՝ Շողակաթ Հակոբյան

Դպրոց՝ «Վարդենիսի Էդ. Պողոսյանի անվան N 2հիմնական դպրոց» ՊՈԱԿ

Բովանդակություն

1.Ներածություն……...3

2.Գրական ակնարկ…….....6

3.Փորձարարական հետազոտություն…….....22

3.1.Խմբի նկարագիրը…….…….…22

3.2.Փորձարարական դաս-1……..22

3.3.Փորձարարական դաս-2…….……23

4.Եզրակացություն……..……25

5.Գրականության ցանկ……27

1.Դասապլան-1……..……..……28

2.Դասապլան-2……...……32

Համագործակցային ուսուցման կիրառման
պատմությունը գալիս է դեռևս անտիկ ժամանակներից
Հին հույն Սենեկան պնդում էր.

Սովորեցնողը սովորում է կրկնակի

Ներածություն

<u>Հետազոտության արդիականությունը:</u> Մեր երկրի կարևոր հարստություններից մեկը գիտական ներուժն է, որի ձևավորման պատասխանատվությունը կրում է նաև հանրակրթությունը: Հասարակական բոլոր փոփոխությունները ազդում են նաև կրթական համակարգի վրա: Հետանկախացման տարիներին ՀՀ հանրակրթության մեջ իրականացվում են կրթական բարեփոխումներ, [1]որոնք անդրադառնում են կրթության կազմակերպման տարբեր հարցերին: Հասարակաությունը դպրոցին և հատկապես ուսուցչին է լիազորել իր ապագայի կերտումը:

Այս աշխատանքում ցանկանում եմ անդրադառնալ բարեփոխումների պահանջով առաջադրված համագործակցային ուսունման, համագործակցային մեթոդների, հնարների կիրառման արդյունավետության ուղիների մատնանշմանը:

Համագործակցային ուսուցումը լայն տարածում է գտել աշխարհում: Այն ավելի ու ավելի է կիրառվում՝ որպես աշխատանքային, դասավանդման և ուսուցման նոր մոտեցում և ռազմավարություն: Համագործակցային ուսուցումը խմբային աշխատանքի առավել բարձր աստիճանն է, որը ենթադրում է խմբային աշխատանքի որոշակի նոր մշակույթի ձևավորում: Այն ընձեռում է հնարավորություններ բազմաբնույթ կրթական նպատակներին հասնելու համար, ինչպիսիք են ակադեմիական հասկացությունների, սկզբունքների և իրադարձությունների ընկալումը, միջանձնային հմտությունների զարգացումը և այլն: Ժամանակակից ուսուցման պրակտիկայի լավագույն օրինակը փոքր խմբային աշխատանքն է, որի արմատները կարելի է գտնել սոցիոլոգների և ժամանակակից մանկավարժների աշխատանքներում:

---

[1] Տե՛ս, Հովհաննիսյան Ա., Հարությունյան Կ., Խրիմյան Մ., Խաչատրյան Ս., Բայաթյան Ն., Ալեքսանյան Լ.,Պուրուկուրու Վ., Համագործակցային ուսուցում, Երևան, 2006, էջ122:

Համագործակցային ուսուցումը ժամանակակից կրթության, դասավանդման և ուսուցման ամենաշատ ուսումնասիրված ոլորտներից է: Խիստ կարևոր է իրարից տարբերել ավանդական խմբային աշխատանքը և համագործակցային ուսուցումը: Ուսուցիչներից շատերն են դասավանդման ընթացքում կիրառում խմբային աշխատանքը, սակայն քչերն ունեն ուսուցման գործընթացում համագործակցային ուսուցման հիմնական տարրերն ու մեթոդները ինտեգրելու համար անհրաժեշտ վարպետություն: Համագործակցային ուսուցման կիրառումը սովորելը ժամանակատար գործընթաց է, մեկ աշխատանքային հանդիպումը կամ սեմինարը բավարար չէ: Այս ուսուցումը ճիշտ կազմակերպելու համար անհրաժեշտ է դասարանում պարբերաբար կիրառել ուսուցման հմտությունները, ուսումնասիրել համագործակցային ուսուցման վերաբերյալ գրականություն, ինչպես նաև համագործակցել նմանատիպ գործընթացներում ներգրավված ուսուցիչների հետ:

Համագործակցային ուսուցումը Հայաստանում ունի ներդրման ու զարգացման համար անհրաժեշտ հիմք և բարենպաստ պայմաններ:

<u>Հետազոտության նպատակը:</u> Այս աշխատանքի նպատակն է ներկայացնել համագործակցային ուսուցման տեսության զարգացման և գործնական կիրառությունների մասին հարցերում գիտամանկավարժական փորձը: Հիմնվելով ժամանակակից մանկավարժական տեսությունների վրա՝ կոնկրետ դասի օրինակով կներկայացվեն և կվերլուծվեն մի քանի մեթոդներ և մասնակցությունը խթանող միջոցներ:

Նախևառաջ, մեզ հետաքրքրում է այն հարցը, թե հնարավո՞ր է համագործակցային ուսուցման տարրերի և միջոցների կիրառելիության միջոցով աշակերտների մոտ զարգացնել դրական փոխկապակցվածություն, անձնական պատասխանատվություն, դեմ առ դեմ փոխազդեցություն, սոցիալական հմտություններ, խմբային համագործակցության գաղափարներ: Ըստ այդմ՝

դիտարկվել են Դեյվիդ և Ռոջեր Ջոնսոնների, Պասի Սահլբերգի և այլոց մոտեցումները[2]:

Սույն աշխատանքով ցանկանում եմ անդրադառնալ բարեփոխումների պահանջով առաջադրված համագործակցային միջոցների կիրառման արդյունավետությանը և որքանո՞վ է առաջադրված փորձը նպաստելու նշյալ հմտությունների զարգացմանը:

Հետազոտության համար հիմք են հանդիսացել համագործակցային ուսուցման վերաբերյալ հիմնարար հետազոտությունները: Քանի որ հետազոտական աշխատանքի համար ընտրել եմ համագործակցային ուսուցումը, ուստի ուսումնասիրել եմ գրականություն համագործակցային ուսուցման վերաբերյալ, ինչպես նաև օգտվել եմ համացանցից՝ փորձելով ավելի խորը ուսումնասիրել և ճանաչել համագործակցային ուսուցման դերը դպրացականի կյանքում:

Ստորև ներկայացնում եմ գրականությունից ինձ հանդիպած մտքերը համագործակցային ուսուցման վերաբերյալ.

«Ոչ մի հետաքրքիր նորույթ ի հայտ չի գալիս առանց համագործակցության»:

Ջեյմս Ուայթսոն

«Դպրոցը պետք է աշակերտներին սովորեցնի միասին աշխատել՝ նրանց ներգրավելով իմաստալից ուսումնական ծրագրերում, որպեսզի հետագայում այդ ամենը կիրառեն կյանքում»:

Ջոն Դյուիի

«Գիտելիքին հատուկ է սոցիալական որոշակի բնութագիր, և ծնվում է ծագած խնդիրների ըմբռնման և լուծման ընթացքում գործադրած համատեղ ջանքերով»:

«Մտավոր աշխատանքի լավագույն ձևը սովորածը ընկերոջը բացատրելն է:

Վիգոտսկի

[2] Տե՛ս, Հովհաննիսյան Ա., Հարությունյան Կ., Խրիմյան Մ., Խաչատրյան Ս., Բայաթյան Ն., Ալեքսանյան Լ.,Պուրուկուրու Վ., Համագործակցային ուսուցում, Երևան, 2006:

Գրական ակնարկ

Կրթության ոլորտի աշխատողներն ամենուրեք գիտակցում են, որ դասավանդման և ուսուցման հնացած ձևերը այլևս անկարող են ստեղծել ու զարգացնել գիտելիքներ ու հմտություններ, որոնք անհրաժեշտ են քաղաքացուն բարեկեցիկ կյանքով ապրելու համար: Հետևաբար, դպրոցում անհրաժեշտ են դասավանդման և ուսուցման այլընտրանքային մոտեցումներ:

Համագործակցային ուսուցման, ուսումնառության արմատները հասնում են Ջոն Դյուիի աշխատություններին, որտեղ հեղինակը, ընդգծելով կրթության կարևորությունը, այն դիտարկում է որպես ուսուցման այնպիսի մեխանիզմ, որը քաղաքացիներին սոցիալ-ժողովրդական հասարակարգում համագործակցության սկզբունքներով ապրելու ունակություններ է տալիս:

Դասավանդման խնդիրների լուծման նպատակով համագործակցային ուսուցումը ուսուցիչների կողմից փորձարկվող միջոցներից մեկն է:

Ուսուցումը համագործակցային կլինի այն դեպքում, երբ աշակերտները միասին, զույգերով կամ փոքր խմբերով աշխատում են մի ընդհանուր խնդիր լուծելու, մի ընդհանուր թեմա հետազոտելու կամ նոր միտք, նորարարություն իրականացնելու համար»:

Համագործակցային ուսուցումը, որպես այլընտրանքային մանկավարժական մոտեցում, մեծ ճանաչում է ձեռք բերել բազմաթիվ երկրների ուսուցիչների և ուսուցիչների պատրաստում և վերապատրաստում իրականացնողների կողմից: Դրա լայն տարածմանը նպաստող գործոններից են՝

- դասարաններում ուսուցումը սովորողի անհատական առանձնահատկություններին հարմարեցնելը,
- բազմակողմանի կրթական նպատակներին միաժամանակ հասնելու հնարավորությունը,
- ուսուցման առանձնահատկություններին, ժամանակակից մոտեցումներին

համահունչ լինելը:

Համագործակցային ուսուցման տարրերը ըստ Ջոնսոնների հինգն են[3]՝

1.Դրական փոխկախվածություն. Խմբում ձևավորվում է միմյանց օգնելու, խրախուսելու, աջացելու մթնոլորտ: Սովորողի ջանքերն ուղղվում են ընդհանուր նպատակին համատեղ հասնելուն: Այն նպաստում է հանդուրժողականության և վստահության ձևավորմանը: Քննարկումներն ու ձգտումներն օգնում են խմբի անդամների փոխհարաբերություններին:

2.Դեմ առ դեմ, խթանող փոխազդեցություն. Խմբի անդամները համգործակցում են, փոխանակում են տեղեկություններ, կարծիքներ և ռեսուրսներ, մշակում և վերլուծում են տեղեկությունը, ապահովում են հետադարձ կապ, քաջալերում և աջակցում են միմյանց՝ ընդհանուր նպատակին հասնելու համար:

3.Անհատական հաշվետվություն և պատասխանատվություն. Խմբի յուրաքանչյուր անդամ պատրաստ է պատասխանելու և մտքեր փոխանակելու, կրում է պատասխանատվություն ուսուցման արդյունքների համար, խմբի մաս է, գաղափարներով և մտքերով կիսվում է մյուս անդամների հետ, պատրաստ է ներկայացնելու խմբի աշխատանքի արդյունքը:

4.Սոցիալական հմտություններ. Խմբի անդամների միջև ձևավորվում են վարքագծային նորմեր՝ անաղմուկ աշխատանք, ներկայություն մինչև աշխատանքի ավարտը, խոսողին հետևելը, առաջադրանքը կատարելիս ներդում ունենալը:

5.Խմբային գործընթաց. Խմբի անդամների հաջողությունների, փոխհարաբերությունների, համագործակցության բարելավման հետ կապված խնդիրների քննարկման փուլ է: Դրանք զարգացնում են սոցիալական հմտությունները, ապահովում են խմբի անդամների գործողությունների և մասնակցության հետադարձ կապը:

Հետագայում այդ տարրերին Պասի Սալբերգի կողմից ավելացվեց

[3]Տե՛ս, Վարդումյան Ս., Ջաղինյան Ն., Հարությունյան Լ., Գարի Վարելլա, Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, Երևան, 2005:

փոխներգործուն/ինտերակտիվ առաջադրանքը՝ որպես համագործակցային ուսուցման 6-րդ տարր: Նրա կարևոր չափանիշը այն է, որ խմբի անդամները հեշտությամբ մասնակցեն առաջադրանքի կատարմանը[4]:



Խմբային աշխատանքի ամենագնահատելի հատկանիշը խմբի անդամների միջև համագործակցությունն է: Համագործակցության արդյունավետությունը կախված է մեթոդապես ճիշտ տարվող գործունեությունից: Ուսուցիչը պետք է հաշվի նստի աշակերտների ինքնուրույն կարծիքների, կայացրած որոշումների, միմյանց հետ ազատորեն հաղորդակցվելու իրավունքների հետ[5]:

Համագործակցային ուսուցման տարրերի կիրառումը նպաստում է դասարանում նոր՝ համագործակցային միջավայրի ձևավորմանը, օգնում է ուսուցչին հասկանալու էությունն ու պլանավորելու դասը, պայմաններ է ստեղծում ուսուցման արդյունավետության գնահատման և արժևորման համար:

Ուրիշների հետ աշխատելու և համագործակցային ստեղծագործական աշխատանքից առավելագույնս օգուտ քաղելու էական պայմաններից մեկն ուրիշի

[4] Տե՛ս, Ջոնսոն, Դ.Վ., (2008) «Համագործակցություն դասարանում» (8-րդ, հրատ.)
[5]Տե՛ս, Վարդումյան Ս., Ջաղինյան Ն., Հարությունյան Լ., Գարի Վարելլա, Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, Երևան, 2005:

տեղում իրեն է պատկերացնում, քանի որ դիմացինի տեսակետի ըմբռնումն աշակերտին հնարավորություն է տալիս ավելի հեշտությամբ հարմարվելու կյանքի պահանջներին[6]:

Համագործակցային ուսուցման կազմակերպումը

Համագործակցային ուսուցման ընթացքում խմբի յուրաքանչյուր անդամ կամ ամբողջ դասարանն ակտիվորեն ներգրավված է ուսուցման մեջ, իսկ նոր գիտելիքը մշակվում ու յուրացվում է հենց աշակերտի միջոցով: Համագործակցային ուսուցման ընթացքում կարևորվում է ոչ միայն ակադեմիական գիտելիքների և հմտությունների ձեռքբերումը, այլև խմբային գործընթացի մշակմամբ համագործակցողներ և գիտելիքների ակտիվ կիրառողներ ձևավորելը: Համագործակցությունն ստեղծում է ինքնաճանաչման ավելի բարձր մակարդակ, քան կարող են ապահովել մրցակցային կամ անհատական ուսուցման եղանակները: Համագործակցային իրավիճակներում անհատները միտված են փոխներգործելու, նպաստելու միմյանց հաջողությանը, ձևավորելո հետաքրքրությունների լայն շրջանակ և կազմելու միմյանց կարողությունների մասին իրական պատկերացումներ, հետևաբար տալիս են ճշմարիտ հետադարձ կապ:

Ուսուցչի դերը համագործակցային ուսուցման մեջ

Ուսուցչի գործը հասարակության շրջանում ամենից կարևորվող, ամենամեծ հնարամտություն պահանջող, օրեցօր ավելի գնահատվող մասնագիտություններից է: Այսօր հաջողության հասնելու համար ուսուցիչներին հարկավոր են երեխաներին կառավարելու և օգնելու նոր եղանակներ, նաև՝ երեխաների արդյունավետ ուսուցմանհամար անհրաժեշտ մոտեցումների խորը ընկալում:

Ուսուցումը սովորողի ներսում տեղի ունեցող բարդ գործընթաց է: Ուսուցիչն այն կարող է միայն ուղղորդել, ստեղծել դրա համար նպաստավոր միջավայր,

[6] Տե՛ս, Հովհաննիսյան Ա., Հարությունյան Կ., Խրիմյան Մ., Խաչատրյան Ս., Բայաթյան Ն., Ալեքսանյան Լ.,Պուրուկուրու Վ., Համագործակցային ուսուցում, Երևան, 2006, էջ 145:

աջակցել և մտածելու հնարավորություն ընձեռել: Համագործակցային մեթոդներն ակնկալում են ուսուցչիդերի փոփոխություն, և այդ դերը լի է մարտահրավերներով: Համագործակցային ուսուցում կիրառող ուսուցիչը պետք է լինի համբերատար խմբի անդամներին ուղղորդելու համար:

Խմբերին անհրաժեշտ է բավական ժամանակ միմյանց հետ ազատ և հարմարավետ զգալու համար: Ինչպես ավանդական, այնպես էլ համագործակցային ուսուցման դեպքում հաջողության առանցքը ուսուցչի նախապատրաստությունն է:

Ուսուցիչը պետք է պլանավորի ոչ միայն բովանդակության մոտեցումը, այլ նաև աշակերտների գործողությունները և գնահատումը[7]:

Համագործակցային դասի պլանավորումը

Ուսուցման գործընթացի արդյունավետությունը մեծապես կախված է դասի ճիշտ պլանավորումից, որը կարելի է պատկերացնել հետևյալ հաջորդականությամբ՝ նախապատրաստական աշխատանքներ դասից առաջ, բուն դասը և վերլուծական աշխատանք, որը պետք է կատարել դասից հետո[8]:

Դասից առաջ

Արդյունավետ դասավանդման կարևոր նախապայման է դասին հանգամանալից նախապատրաստվելը: Սա ենթադրում է նյութին մանրամասն ծանոթանալը և դասի ողջ ընթացքը պատկերացնելը: Թերևս ամենակարևորը դասի նպատակը հստակ գիտակցելն է. ու՞ր ենք ուզում հասնել, ի՞նչ ուղիով, ի՞նչ միջոցներով:

Նախապատրաստության կարևոր մաս է կազմում դասասենյակի համապատասխանեցումը տվյալ դասի ընթացքից բխող պահանջներին: Ուսուցիչը պետք է դասավորի նյութերը, համապատասխանեցնի կահավորանքը և համոզվի, որ օգտագործվելիք տեխնիկական միջոցները սարքին են: Հնարավոր է, որ կարիք լինի փոփոխելու մեթոդների հաջորդականությունը՝ իրադրությանը հարմարվելու նպատակով:

---

[7] Տե՛ս, նույն տեղում էջ 48:

[8] Տե՛ս, Հայոց պատմություն 6-7: Ուսուցչի ձեռնարկ, Ա. Ղուկասյան, Ա. Գյուլբուդաղյան –Երևան: «ՄԱՆՄԱՐ», 2013, էջ 88:

Այս ամենի մասին նախօրոք հոգալը ուսուցչին լրացուցիչ վստահություն կներշնչի, կօգնի դասի հարթ ընթացքին և ժամանակի արդյունավետ տնօրինմանը: Դասից առաջ ուսուցիչը, որոշակի հարցերի շուրջ նախապես մտածելով, կարող է ավելի հստակ գնահատել դասին իր պատրաստ լինելը և բարելավել դասի պլանը

Այդ հարցերն են՝

- Որքանո՞վ են իմ ակնկալիքներն ու սպասելիքները իրատեսական:
- Ինչպե՞ս կարող եմ համոզվել, որ աշակերտները պատրաստ են վարժության քննարկմանը, մեթոդի կիրառմանը:
- Ինչպե՞ս պետք է կառուցեմ առաջադրանքը:
- Որքանո՞վ են իմ ակնկալիքները իրատեսական ժամանակի առումով:
- Ինչպե՞ս կարող եմ գնահատել աշակերտների հմտությունների ձեռքբերումը:
- Ի՞նչ եմ ուզում, որ աշակերտները զգան (ինչպիսի՞ վերաբերմունք եմ ուզում ձևավորել):

<u>Բուն դասը ԽԻԿ համակարգով</u>

ԽԻԿ համակարգը երեք փուլից կազմված ուսուցման կազմակերպման ռազմավարություն է: ԽԻԿ անվանումը եռափու լիամակարգի (Խթանում-Իմաստի ընկալում-Կշռադատում) փուլերի անվանումների հապավումն է:Այն կիրառվում է ոչ միայն նյութը մատուցելիս, այլև մինչև նյութը հաղորդելը և հաղորդելուց հետո: Այս համակարգով ուսուցման կազմակերպումը նպաստում է սովորողի քննադատական մտածողության, ինքնուրույն եզրահանգումներ անելու ունակության, ստեղծագործական մտածողության զարգացմանը:

Խթանումը – ԽԻԿ համակարգի առաջին փուլն է, որի նպատակն է խմբային քննարկման միջոցով պարզել աշակերտների ունեցած գիտելիքները նոր ներկայացվող նյութի վերաբերյալ: Այն կարելի է իրականացնել, օրինակ, «Մտագրոհ», «Պրիզմա», «Խառնված հերթականություն» և այլ մեթոդների օգնությամբ (դրանց կանդրադառնանք հաջորդ գլխում):

Խթանման փուլի հիմնական նպատակներն են՝

- բացահայտել նոր նյութի վերաբերյալ աշակերտների ունեցած գիտելիքները,
- ակտիվացնել աշակերտներին՝ ներգրավվելով նրանց քննարկվելիք նյութի մեջ
- աշակերտների մեջ ձևավորել գիտելիքներ և հմտություններ ձեռք բերելու ձգտում, շահագրգռվածություն:

Իմաստի ընկալումը- եռափուլ համակարգի երկրորդ աստիճանն է: Այս փուլում հաղորդվում է նոր նյութը, տեղեկատվությունը կամ գաղափարը: Այն կարող է իրականացվել բազմազան ձևերով (տեքստը պատմելու, ցուցադրելու, կարդալու միջոցով նյութը մատուցելու և այլն): Այս փուլում կարելի է կիրառե լորոշակի մեթոդներ, ինչպես՝ «Փոխգործուն նշանների համակարգ», «Բանավեճ», «Խճանկար», «Ուղղորդված ընթերցանություն» և այլն:

Իմաստի ընկալման փուլի նպատակներն են՝

- սովորողի մոտ հետաքրքրության աճի պահպանումը,
- տեղեկատվության ընկալման ինքնավերահսկման ապահովումը,
- նոր և հին տեղեկատվության շաղկապումը և իմացության նոր կառույցի ստեղծումը:

<u>Կշռադատումը</u> –ԽԻԿ համակարգի երրորդ փուլն է: Այս փուլում սովորողը յուրացնում է նոր տեղեկատվությունը՝ հարմարեցնելով իր ունեցած գիտելիքներին: Այս փուլին նպաստող տարբեր մեթոդների («Քառաբաժան», «Ամփոփիչ նամակներ», «Հնգյակ», «Վենիդիագրամ» և այլն) օգտագործումն օգնում է, որպեսզի աշակերտն ինքը՝

- հանրագումարի բերի իր գիտելքիները
- յուրացնի նոր գիտելիքը՝դրանք դարձնելով իր սեփականությունը
- վերակառուցի իր ունեցած նախկին գիտելիքները նոր ձեռքբերած տեղեկատվության հիման վրա:

Դասից հետո անհրաժեշտ է կատարել վերլուծական աշխատանք.

- Ուսուցիչը հասա՞վ արդյոք դասի նպատակին:
- Արդյո՞ք իրականացան դասի նպատակներին հասնելու ակնկալիքներըև ի՞նչ

չափով:

- Ճիշտ էին արդյո՞ք ընտրված մեթոդները:
- Ժամանակի բաշխումը որքանո՞վ էր իրատեսական:
- Ի՞նչը կարելի էր ավելի ճիշտ կազմակերպել և ինչպե՞ս:

Այսպես, ԽԻԿ համակարգը ուսուցման կազմակերպման համակարգված մոտեցման հնարավորություն է ընձեռում, այն ապահովում է համադրված ակտիվ գործընթաց, սեփական տեսակետը պաշտպանելու պատասխանատվություն: Այն նպաստում է հանդուրժողականության ձևավորմանը, սովորողների ստեղծագործական մտածողության զարգացմանը, մտքերը ազատ արտահայտելու հմտության զարգացմանը, լսելու կարողության զարգացմանը:

Համագործակցային դասը մի գործընթաց է, որը հիմնականում կազմված է տրամաբանական իրար հաջորդող վարժություններից: Դրանց կատարման ընթացքում, միասին սովորելով և փորձարկելով սոցիալական, ինքնաճանաչման և մտածողության տարբեր հմտություններ, սովորողներն ակտիվորեն կառուցում են նոր գիտելիքներ և ձեռք են բերում ու զարգացնում նոր հմտություններ:

<u>Դասի կազմակերպչական հիմքը</u>

- Աշխատում են բոլորը և յուրաքանչյուրը:
- Բոլորի կարծիքը հետաքրքիր է, բոլորի հաջողությունները՝ հուսադրող:
- Յուրաքանչյուրը շնորհակալ է բոլորին իր մասնակցության համար, և բոլորը շնորհակալ են միմյանց իրենց առաջընթացի համար:
- Վստահել ուսուցչին, որպես խմբային աշխատանքի առաջնորդի, բայց յուրաքանչյուր ոք ունի նախաձեռնողական առաջարկի իրավունք:
- Յուրաքանչյուր ոք ունի անցկացված դասի վերաբերյալ կարծիք հայտնելու իրավունք:
- Աշակերտը ուսումնական գործընթացի ակտիվ սուբյեկտ է, ինքնուրույնություն ցուցաբերելով որոշումներ կայացնելու և մշակելու հարցում, պատրաստ է պատասխանատվություն կրել իր գործողությունների համար, ինքնավստահ է,

նպատակասլաց:

- Ուսուցիչը խորհրդատու է, դաստիարակ, գործընկեր:

<u>Համագործակցային ուսուցման տեղեկատվական տեխնոլոգիաներն ու մեթոդները դպրոցում</u>

«Մեթոդը միաժամանակ նախադրյալ է և նյութ, գործիք և ուսումնասիրության արդյունք»

Լ. Վիգոտսկին

Ժամանակակից կրթական գործընթացում կարևորվում է ոչ թե պատրաստի գիտելիքի մատուցումն ուսուցչի կողմից, այլ աշակերտին մասնակից դարձնելը այդ գիտելիքի ձեռքբերմանը: Համագործակցային մեթոդները թույլ են տալիս առավել արդյունավետ յուրացնել նոր նյութը, զարգացնել ինքնուրույնության, համագործակցային, հետազոտական աշխատանք կատարելու բազում հմտություններ, օրինակ՝ տեղեկույթի որոնման, հավաքման, մշակման և այլն:

Պետք է սովորեցնել երեխային աշխատել տեղեկատվության հետ, սովորեցնել սովորել: Ինչպես ասել է Ա. Պ. Սեմյոնովը՝ «Ժամանակակից դպրոցի կարևորագույն խնդիրն է սովորեցնել մարդուն ապրել տեղեկատվական աշխարհում»:

ՏՀՏ-ների օգտագործման հիմնական առանձնահատկությունները, որոնք կօգնեն ուսուցչին դասի ժամանակ ստեղծել բարենպաստ պայմաններ և հասնել նյութի յուրացման բարձր մակարդակի.

- Դիդակտիկ նյութերի ստեղծում և նախապատրաստում /առաջադրանքների տարբերակներ, աղյուսակներ, սխեմաներ, գծագրեր, ցուցապաստառներ և այլն/
- ուսումնական նյութի վերաբերյալ շնորհանդեսի ստեղծում
- պատրաստի ծրագրային արտադրանքի օգտագործում

- դասին նախապատրաստվելու, արտադասարանական միջոցառումների, ինքնակրթության համար համացանցում ռեսուրսների փնտրում և օգտագործում
- կրթության և դաստիարակության արդյունքներին հետևելու համար մոնիթորինգի ստեղծում
- տեքստային աշխատանքների ստեղծում
- Պատմական ֆիլմի դիտում

Համագործակցային ուսուցման մեթոդները[9]

- Աշակերտների թիմային առաջադիմություն
- Խճանկար
- Շրջագայություն պատկերասրահում
- Երեք բանալի և մեկ կողպեք
- Հինգրոպեանոց ազատ շարադրանք
- Խմբային հետազետություն

Աշակերտների թիմային առաջադիմության մեթոդ:

Համագործակցային ուսուցման այս մեթոդը մշակվել է Ջոն Հոփկինսի համալսարանի պրոֆեսոր Ռոբերտ Սլավինի կողմից: Այս մեթոդը խթանում է աշակերտների ուսումնառությունը: Այստեղ էական է այն հանգամանքը, որ գնահատվում է աշակերտների առաջընթացը: Այս մեթոդը լուրջ խթան է ցածր առաջադիմությամբ աշակերտների համար, քանի որ նույնիսկ չնչին առաջընթացի պարագայում նրանք կարող են ներդրում ունենալ թիմի արդյունքում: Իսկ միջին ու բարձր առաջադիմությամբ աշակերտները պետք է մի կողմից՝ օգնեն իրենց դասընկերներին, մյուս կողմից՝ կարողանան պահպանել ու բարելավել իրենց

[9] Տեղեկատվությունը հասանելի է հետևյալ հղումով՝
Համագործակցային ուսուցում - Վիքիպեդիա՝ ազատ հանրագիտարան (wikipedia.org)

նախորդ ցուցանիշները: Այս մեթոդի առավելություններից մեկն էլ այն է, որ հնարավորություն է տրվում գնահատելու և՛ առանձին աշակերտների, և՛ խմբերին: Այն համարվում է առավել հեշտ կիրառվող մեթոդներից մեկը և առանձնապես օգտակար է համագործակցային ուսուցման մեթոդները կիրառող սկսնակ ուսուցիչների համար: Այն խթանում է սովորողների համագործակցությունը և մասնակցությունը: Մեթոդի կիրառության շրջանակներում կիրառվում է գնահատման այնպիսի համակարգ, որի պարագայում աշակերտը շահագրգռված է ոչ միայն իր, այլև խմբի բոլոր անդամների ուսումնառությամբ:

Ընթացքի նկարագրություն: Դաս-դասարանային ավանդական մեթոդով նոր թեման բացատրելուց հետո դասարանը բաժանել 4-5 հոգանոց տարասեռ խմբերի, յուրաքանչյուր խմբում ընդգրկելով գերազանց, միջին և ցածր առաջադիմությամբ աշակերտների, ապահովելով նաև տղա-աղջիկ հավասարությունը (հնարավորության դեպքում): Խմբերին տրվում է նոր թեմային առնչվող հանձնարարություն՝ նշելով, որ հանձնարարության կատարումը համարվում է ավարտված, երբ խմբի յուրաքանչյուր անդամ յուրացրել է նյութը: Ապա ստուգվում է նյութի յուրացման աստիճանը: Այս ընթացքում, սակայն, թիմի անդամներն արդեն չեն կարող օգնել միմյանց, յուրաքանչյուրն ինքնուրույն է կատարում առաջադրանքը: Առաջադրանքի կատարման ստուգման համար կիրառվող գնահատման համակարգն այնպիսին է, որ յուրաքանչյուր աշակերտ իր գնահատականով իր ներդրումն է անում խմբի ընդհանուր ցուցանիշում: Գնահատման միավորների սանդղակի ընտրությունը ուսուցչի հայեցողության տակ է:

Համագործակցային ուսուցման այս մեթոդը խթանում է աշակերտների ուսումնառությունը: Այստեղ էական է այն հանգամանքը, որ գնահատվում է սովորողների առաջընթացը: Այս մեթոդը լուրջ խթան է ցածր առաջադիմությամբ սովորողների համար, քանի որ նույնիսկ չնչին առաջընթացի պարագայում նրանք կարող են որոշակի ներդրում ունենալ թիմի արդյունքում: Իսկ միջին և բարձր առաջադիմություն ունեցող աշակերտները պետք է մի կողմից աջակցեն իրենց

դասընկերներին բարելավելու իրենց ցուցանիշները, մյուս կողմից՝ կարողանան պահպանել ու բարելավել իրենց նախորդ ցուցանիշները:

Այսպիսով՝ խմբի յուրաքանչյուր աշակերտ ունի սովորելու և դասընկերներին օգնելու խթան:

Խճանկար(Ջիգսո)

Խճանկարը համագործակցային ուսուցման մեթոդ է: Այն մշակվել և փորձարկվել է Տեխասի A&M համալսարանում՝ Էլիոթ Արոնսոնի և նրա գործընկերների կողմից, այնուհետև լրամշակվել է Սլավինին և վերջինիս գործընկերների կողմից: Խճանկարի փուլերն են.

- նյութի ուսումնասիրություն և տեղեկատվության հավաքում
- աշխատանք փորձագիտական խմբում
- աշխատանք ուսումնական խմբում
- ավարտական աշխատանք
- ամփոփում

Շրջագայություն պատկերասրահում:

Սա «Խճանկար» մեթոդի տարատեսակ է, որի նպատակն է փոխանակել տեղեկություններ, մշակել գաղափարներ և կատարել անդրադարձ, ինչպես նաև զարգացնել լսելու, ինքնուրույն աշխատելու, քննադատաբար և ստեղծագործաբար մտածելու, ցածրաձայն խոսելու, աշխատանքի արդյունքը ներկայացնելու հմտություններ:

Ընթացքը

1.Ուսուցիչն ուսումնական նյութը բաժանում է 4-6 մասերի և յուրաքանչյուր խմբին տալիս դրանցից մեկը՝ ինքնուրույն ուսումնասիրելու: Խմբերի թիվը կարող է մեծ լինել նյութի մասերի թվից: Այդ դեպքում նյութի նույն մասը կուսումնասիրի երկու խումբ: Չորս հոգուց բաղկացած խմբերն աշխատում են ուսումնական նյութի իրենց

տրվածմասի վրա (ցանկալի է, որ առաջադրանքի կատարման տարբեր մոտեցումներ առաջարկվեն) և ստացված արդյունքները մշակում նկարի, կոլաժի, աղյուսակի, դիագրամի կամ գրաֆիկի տեսքով:

3.Պատրաստի աշխատանքները փակցվում են դասասենյակի կամ միջանցքի պատերին՝ ստեղծելով «պատկերասրահ»:

4.Խմբերի ներսում աշակերտները հաշվում են մինչև 4-ը և կազմում չորս նոր խումբ՝ ըստ իրենց խմբի ներսում ունեցած համարների (դասարանի բոլոր «1» համարի աշակերտները՝ մեկ խումբ, «2»-ները՝ ուրիշ խումբ և այլն):

5.Այս նոր խմբերը շրջում են պատկերասրահում՝ կանգ առնելով յուրաքանչյուր ցուցանմուշի մոտ, և տվյալ խմբի այն անդամը, որը մասնակցել է այդ իսկ ցուցանմուշի ստեղծմանը՝ կատարելով գիդի դեր, մանրամասն ներկայացնում է իրենց աշխատանքը, պատասխանում հարցերին և մասնակիցների առաջարկությունների համաձայն՝ կատարում լրացումներ կամ ուղղումներ: Շրջագայությունն ավարտվում է, երբ բոլոր խմբերը, միևնույն ուղղությամբ «սահելով» ցուցանմուշների մոտով, ծանոթանում են բոլոր աշխատանքներին:

6.Պատկերասրահում շրջագայությունից հետո հիմնական (մայր) խմբերն իրենց աշխատանքները նորից քննության են ենթարկում՝ այս անգամ արդեն համեմատելով մյուս աշխատանքների հետ և վերլուծելով առաջացած հարցերը:

<u>Երեք բանալի և մեկ կողպեք:</u> Աշխատանքը կարելի է կատարել զույգերով կամ խմբով: Այս մեթոդը կարելի է կիրառել այնպիսի դասերի իմաստի ընկալման փուլում, որոնք բավականին ծավալուն են, նույն նյութին կամ երևույթին վերաբերող մի շարք բնորոշ հատկանիշներ կան: Այս մեթոդով աշխատելիս աշակերտների մեջ ձևավորվում է ընտրություն կատարելու, գլխավորը երկրորդականից տարբերելու հմտություն, ինչպես նաև համագործակցելու, իր ընտրությունը հիմնավորելու կարողություն

<u>Հինգրոպեանոց ազատ շարադրանք:</u> Հինգրոպեանոց ազատ շարադրանքի

մեթոդը կարող է կիրառվել ինչպես դասի խթանման փուլում, այնպես էլ կշռադատման՝ ելնելով դասի նպատակից և թեմայից: Ընտրում ենք թեման և առաջարկում հինգ րոպեի ընթացքում ազատորեն շարադրել իրենց մտքերը, որից հետո դադարեցնում են աշխատանքը և ունկնդրում մի քանիսի գրած շարադրանքը:

Խմբային հետազոտության մեթոդ: Համագործակցային ուսուցման մյուս մեթոդների նման խմբային հետազոտությունը հիմնվում է աշակերտների փոխօգնության և համագործակցության վրա: Ի տարբերություն մյուս մեթոդների՝ խմբային հետազոտության հիմնական նպատակը կոնկրետ խնդրի ուսումնասիրությունն է: Թեև այս մեթոդի հեղինակը Թել-Ավիվի համալսարանի պրոֆեսոր Շարոնն է, բայց մեթոդի ակունքները սկիզբ են առնում 20-րդ դարի սկզբի հայտնի փիլիսոփա Ջոն Դյուիի տեսությունից: Դյուին գտնում էր, որ դպրոցը պետք է աշակերտներին սովորեցնի միասին աշխատել՝ նրանց ներգրավելով իմաստալից ուսումնական ծրագրերում, որպեսզի հետագայում այդ ամենը կիրառեն կյանքում: Խմբային հետազոտություն կիրառող ուսուցիչը կարող է հետապնդել 3 փոխկապակցված նպատակ.

1. խմբային հետազոտությամբ աշակերտներին սովորեցնել համակարգված նվերլուծականորեն հետազոտել կոնկրետ խնդիրները,
2. պայմաններ ստեղծել, որպեսզի աշակերտները խորությամբ յուրացնենուսումնական նյութի բովանդակությունը,
3. սովորեցնել համագործակցել խնդրի լուծման հետազոտման ընթացքում:

Այսպիսով՝ այս նպատակների իրականացման արդյունքում խմբային հետազոտություն կատարող աշակերտները խորությամբ յուրացնում են ուսումնական նյութի բովանդակությունը, զարգանում են իրենց հետազոտելու և համագործակցելու հմտությունները:

Ընթացքը

Քայլ 1. Խմբերի ձևավորումը և թեմայի ընտրությունը.

Խմբերի ձևավորման և թեմայի ընտրության հերթականությունը կարելի է

փոխել: Որոշ դեպքերում ուսուցիչը կարող է ընտրել թեմաներ, ապա նոր, ըստ աշակերտների հետաքրքրության, ձևավորել խմբեր: Այլընտրանքն այն է, երբ նախ ձևավորում են խմբերը, ապա սովորողներն իրենք են ընտրում հետազոտության թեման: Այս տարբերակը նրանց հնարավորություն է տալիս զարգացնելու դասընկերների հետբանակցելու և փոխզիջումների գնալու հմտությունները:

Քայլ 2. Խմբային աշխատանքի պլանավորումը.

Աշակերտները որոշում են իրենց աշխատանքի բովանդակային ընդգրկումը, նախանշում են ռեսուրսները, մշակում գործողությունների պլան, որոշում խմբի անդամների պարտականությունները: Եթե խմբի բոլոր անդամներն ուսումնասիրում են ամբողջական թեման, ապա պարտականությունների բաժանումը հեշտ է կատարել՝ ընդամենը որոշելով, թե ով ինչ ռեսուրսներ է ուսումնասիրելու: Իսկ երբ խումբը բաժանվում է ենթախմբերի և յուրաքանչյուր ենթախումբ ուսումնասիրում է որևէ ենթաթեմա, ապա անհրաժեշտ է նաև որոշել, թե ով է համակարգելու ենթախմբերի աշխատանքները, ով է պատրաստելու թեմայի ամբողջական ներկայացումը:

Քայլ 3. Հետազոտության իրականացումը.

Սա խմբային հետազոտության ամենակարևոր փուլն է: Այս փուլում են աշակերտները փնտրում ռեսուրսներ, հավաքում տեղեկատվություն: Այս ընթացքում ուսուցիչը, պարբերաբար շրջելով (սահելով) խմբերում, պետք է պարզի, թե ինչ են անում աշակերտները, ինչ աջակցության կարիք ունեն:

Քայլ 4. Արդյունքների ամփոփում և ներկայացման նախապատրաստում.

Աշակերտները այս փուլում վերլուծում և գնահատում են իրենց ձեռքի տակ եղած տեղեկատվությունը, իսկ ուսուցիչը շրջում է խմբերում և աջակցում նրանց: Առաջին հերթին անհրաժեշտ է սովորողների ուշադրությունը կենտրոնացնել հետազոտվող թեմայի վրա՝ թույլ չտալ շեղվել թեմայից: Կարելի է նաև խորհուրդ տալ աշակերտներին իրենց ստացած արդյունքները ներկայացնելիս պարբերաբար օգտվել աղյուսակներից, դիագրամներից և գրաֆիկներից:

Քայլ 5. Հետազոտության արդյունքների ներկայացում.

Այս փուլն ունի երկու հիմնական նպատակ՝

- լուսաբանել կատարված հետազոտությունը,
- և կարողանալ հետաքրքիր ու հասկանալի ձևով ներկայացնել այն: Հետազոտության արդյունքները կարելի է ներկայացնել բանավոր, գրավոր, բանավոր-գրավոր, պատկերային ձևով (օրինակ՝ համակարգչային մշակմամբ, ցու-ցապաստառներով, աբստրակտ նկարով կամ կոլաժով): Նշենք, որ նախընտրելի է բազմազան ձևերի օգտագործումը:

Խմբային հետազոտության գնահատումը.

Խմբային հետազոտության գնահատումը պետք է իրականացվի այս մեթոդի երեք նպատակների հասանելիության ստուգման առումով՝

- հետազոտական հմտությունների,
- խմբային (համագործակցային) հմտությունների,
- բովանդակության յուրացման

Փորձարարական հետազոտություն

Խմբի նկարագիրը

Հետազոտությունն իրականացրել եմ Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի թիվ 2 հիմնական դպրոցում: Հետազոտական աշխատանքն իրականացնելու համար ընտրել եմ 6-րդ դասարանանի հայոց պատմության 2 դասաժամ՝ «Մեծ Հայքի թագավորությունն Արտավազդ II–ի օրոք» և «Հայոց թագավորությունը անցումային շրջանում» թեմաները: Դասաժամերը անցկացրել եմ խմբային հետազոտություն մեթոդով: Դասարանում սովորում են տարբեր ընդունակություններով օժտվածեն 28 աշակերտ: Հետազոտական աշխատանքում ներգրավել եմ միջին և թույլ ընդունակություններով օժտված ութ աշակերտների, ովքեր հայոց պատմության դասերից գնահատվում են 6,7,8:

Փորձարարական դաս-1

Այսօրվա դասի թեման էր «Մեծ Հայքի թագավորությունն Արտավազդ II–ի օրոք»: Դասն ամբողջությամբ նվիրված էր նոր նյութի ուսումնասիրմանը: Դասն անցկացրել եմ խմբային հետազոտության մեթոդներով՝ ՏՀՏ միջոցների կիրառմամբ, ֆիլմադիտումով, ինչն էլ ավելի հետաքրքրություն և դասին ներգրավվելու ցանկություն առաջացրեց սովորողների մոտ: Հրահանգել եմ աշակերտներին հաշվել 1-4-ը և միևնույն համարների միավորումով ձևավորել համապատասխան թվով խմբեր: Խմբերին տվել եմ իմ կողմից կազմված վերլուծության հարցաթերթիկ (ֆիլմի վերլուծության համար):

Դասը սկսել եմ «Կանխագուշակումներ հենակետային բառերով» մեթոդով: Գրատախտակին գրեմ եմ ֆիլմի վերնագիրը՝ «Արտավազդ II ՝ Պատիվը կյանքից վեր»: Աշակերտներնը, դատելով ֆիլմի վերնագրից, կանխագուշակումներ են արել ինչի մասին է այն լինելու: Լսելով և ամփոփելով նրանց մտքերը՝ առաջարկել եմ դիտել

ֆիլմը: Դիտել ենք «Արտավազդ II՝ Պատիվը կյանքից վեր» պատմավավերագրական ֆիլմը, շատ զգացմունքային ու հուզական ֆիլմ էր: Ֆիլմում, բնականաբար, կային պատմաբանների կողմից արտահայտված կարծիքներ՝ բարձրաձայնելով Արտավազդ II-ի կառավարման դրական և բացասական կողմերը: Ֆիլմը դիտելուց հետո խմբի աշխատանքը (ֆիլմի վերլուծություն) ներկայացրեցին իմ կողմից ընտրված աշակերտները, որոնց նկատմամբ պետք է իրականացնեի հետազոտական աշխատանքս: Քանի որ հետազոտվող աշակերտները միջին կարողությունների տեր են, հարցերին պատասխանում էին ոչ լիարժեք, իմ թույլտվությամբ ֆիլմի վերլուծությանը մասնակցեցին նաև խմբերի մյուս աշակերտները: Դասի անդրադարձն իրականացվեց «կիսատ նախադասություն» վարժության միջոցով, աշակերտներին հնարավորություն ընձեռելով իրենց ցանկությամբ ընտրել այն կիսատ նախադասությունները, որոնք կուզենան ավարտել: Գնահատեցի այն աշակերտներին, ովքեր մասնակցել էին դասին:

Դասն ավարտվեց տնային աշխատանքի հանձնարարումով: Որպես տնային աշխատանք՝ հանձնարարեցի «Մեծ Հայքի թագավորությունն Արտավազդ II–ի օրոք» դասը /էջ 101-103/[10], Հայոց պատմության աշխատանքային տետրում դասից դուրս գրել ժամանակագրությունը, նոր անուններ և հասկացություններ:

<u>Փորձարարական դաս-2</u>

Այսօրվա դասի թեման էր «Հայոց թագավորությունը անցումային շրջանում»: Դասն սկսել եմ նախապես դասարանը խմբերի բաժանած՝ 4 խումբ.

Թեմայի ուսուցումը սկսել եմ տնային աշխատանքի ստուգումով: Աշակերտները ներկայացրեցին տանը, որպես տնային աշխատանք հանձնարարված, «Արտաշեսյանների արքայացանկ» աղյուսակը: Նախորդ թեմայի յուրացումը պարզելուց հետո ներածական զրույցի միջոցով անցել եմ նոր նյութի

[10] Տե՛ս, Աշոտ Մելքոնյան, Արտակ Մովսիսյան, Էդուարդ Դանիելյան. Հայոց պատմություն. 6-րդ դասարանի դասագիրք, Երևան: Զանգակ, 2018,101-103 էջ:

ուսումնասիրմանը: Դասագրքի տեքստը, ըստ ենթահարցերի, բաժանել եմ համագործակցային փոքր խմբերին և առաջարկել ընթերցել, ընկալել, ըմբռնել դրանց բովանդակությունը: Աշակերտները իրենց հանձնարարված ենթահարցերը ուսումնասիրել են «քառաբաժան» և «պատմական հիշողության հինգ օղակ» մեթոդական հնարների միջոցով: Ութ միջին առաջադիմության տեր աշակերտները, որոնց նկատմամբ պետք է իրականացնեի հետազոտական աշխատանքս, ներկայացրեցին իրենց խմբերի աշխատանքը դասարանին: Իմ թույլտվությամբ տեղից լրացումներ կատարեցին մյուս աշակերտները: Դասի անդրադարձն իրականացվեց «Ես-Դու-Մենք» վարժության միջոցով: Աշակերտները ներկայացրեցին սեփական ներդրումը խմբի աշխատանքում, խմբի մյուս անդամների ներդրումը և ընդհանուր խմբի աշխատանքը: Գնահատեցի այն աշակերտներին, ովքեր մասնակցել էին դասին, գնահատվեցին նաև պասիվ աշակերտները՝ ըստ իրենց գիտելիքների: Դասն ավարտվեց տնային աշխատանքի հանձնարարումով: Հանձնարարվեց դաս 26 /էջ 109-113/[11]: Դասից դուրս բերել նոր անունները և հասկացությունները, գրել ժամանակագրությունը:

[11] Տե՛ս, նույն տեղում էջ 109-113:

Եզրակացություն

Սույն աշխատանքի շրջանակներում կատարված ուսումնասիրությունների արդյունքում հանգեցի հետևյալ եզրակացությունների՝

- Համագործակցային ուսուցումը ունի ուսուցանող և աշակերտներին ուսումնական գործընթացի մեջ ներգրավվող բնույթ.
- Համագործակցային ուսուցման մեթոդները դասարանում ստեղծում են փոխկապակցված գործունեության եղանակ.
- Ուսուցման համագործակցային մեթոդների կիրառումը պատմության դասերին բարձրացնում է ուսուցման գիտականությունն ու մատչելիությունը, նպաստում է պատմական տարբեր իրադարձությունների ավելի բազմակողմանի և խորքային ընկալմանը.
- Համագործակցային մեթոդների կիրառումը նպաստում է սոցիալական, ինքնակառավարման, հաղորդակցման հմտությունների զարգացմանը: Այս մեթոդը աշակերտներին ավելի շատ հնարավորություններ է տալիս մասնակցելու և շփվելու: Զույգերով և խմբերով աշխատելը երեխաների մոտ ձևավորում է ընդհանուր նպատակ ընդունելու, պարտականությունները կիսելու, առաջարկվող նպատակին հասնելու ուղիների համաձայնեցման, նրանց գործողությունները գործընկերների գործողությունների հետ փոխկապակցելու, նպատակների և աշխատանքի համեմատմանը մասնակցելու կարողությունը: Իրար հետ շփվելու, քննարկում վարելու կարողությունը յուրաքանչյուր երեխայի հնարավորություն է տալիս զարգացնել լսելու, հերթով խոսելու, իրենց կարծիքն արտահայտելու, ճշմարտության համատեղ հավաքական որոնմանը պատկանելու կարողություն.
- Հետազոտվող աշակերտները իմ հետազոտության արդյունքում ցուցաբերեցին լավ արդյունք, իսկ առաջադիմությամբ աչքի ընկած աշակերտները պատասխանում էին լիարժեքորեն: Հասակակիցների խմբում աշակերտն

ավելի ազատ է արտահայտում իր մտքերն ու դատողությունները, գործում է անկաշկանդ, ինչն էլ նպաստում է ուսուցման արդյունավետ կազմակերպմանը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Հովհաննիսյան Ա., Հարությունյան Կ., Խրիմյան Մ., Խաչատրյան Ս., Բայաթյան Ն., Ալեքսանյան Լ.,Պուրուկուրու Վ., Համագործակցային ուսուցում, Երևան, 2006:

2.Վեսա Պուրուկուրու Համագործակցային ուսուցում-Վերապատրաստողի ուղեցույց, Երևան: «Անտարես»: 2006թ. 95 էջ:

3. Վարդումյան Ս., Ջաղինյան Ն., Հարությունյան Լ., Գարի Վարելլա, Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, Երևան, 2005:

4 Սերոբ Խաչատրյան, «Ուսուցման արդյունավետ հնարներ», 2020թ.:

5. Ա. Ղուկասյան, Ա. Գյուլբուդաղյան, Հայոց պատմություն 6-7: Ուսուցչի ձեռնարկ, Երևան: «Մանմար», 2013.-88 էջ:

6.Աշոտ Մելքոնյան, Արտակ Մովսիսյան, Էդուարդ Դանիելյան. Հայոց պատմություն. 6-րդ դասարանի դասագիրք, Երևան: Զանգակ, 2018,176 էջ:

Վարդենիսի 2 հիմնական դպրոց

Դասապլան (Նմուշ 1)

Ուսուցիչ՝ Շ. ՀԱԿՈԲՅԱՆ

Առարկա՝	Հայոց Պատմություն	Ամսաթիվ	09.11.22	Կիսամյակ	1	Դասարան	6
Թեմա	Մեծ Հայքի թագավորությունն Արտավազդ II–ի օրոք						
Օգտագործվող նյութեր	Դասագիրք, կավիճ, ՏՀՏ, գրատախտակ, աշխատանքային տետր, ատլաս, (Բ. Հարությունյան, Ա մաս,)						
Դասի նպատակ	ա) Գիտենա Արտավազդ II-ի գահակալման մասին բ) Նկարագրի հռոմեական 2 արշավանքները դեպի Պարթևստան: գ) Վերլուծի Արտավազդ II-ի արտաքին քաղաքական կողմնորոշումը: դ) Գնահատի հայ-պարթևական դաշինքի:						
	Ուսոցման արդյունքներ որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ:						
Վերջնարդյունքներ	• Եզրահանգել,որ Արտավազդ II-ը հիանալի կրթություն ստացած և ստեղծագործող գործիչ էր: • Համեմատել Արտավազդ II-ի և Կրասոսի ծրագրերը Խառանի ճակատամարտից առաջ և կարողանալ եզրահանգումներ կատարել: • Վերլուծել ստեղծված իրավիճակը և հայ-պարթևական դաշինքի անհրաժեշտությունը: • Համեմատել հռոմեական 2 արշավանքները դեպի Պարթևստան: • Հակադրել Արտավազդ II-ի և Անտոնիոսի կատարած քայլերը: • Արժևորել Արտավազդ II-ի գործունեությունը:Վերլուծել արքայավայել պահվածքն ու մեկնաբանել հնարավոր բոլոր հետևանքները:						
Գործողություն. Ժամ/ տրողություն	**Ուսումնական գործունեություն** **Աշակերտներ**	**Ուսումնական գործունեություն** **Ուսուցիչ**	**Հարցադրումներ**	**Կիրառվող մեթոդներ**			

3-5 րոպե	Ողջույն: Անհրաժեշտության դեպքում պատասխանում ուսուցչի հարցերին: հաշվել 1-4-ը և միևնույն համարների միավորումով ձևավորել համապատասխան թվով խմբեր:	Ողջույն, հաշվառում, դասի նախապատրաստում: Հրահանգել աշակերտներին ձևավորել խմբեր: Խմբերին տալ վերլուծության հարցաթերթիկ (ֆիլմի վերլուծության համար):	Ի՞նչ անհասկանալի հարցեր ունեն:	
Խթանում **5-7 րոպե**	Դատելով ֆիլմի վերնագրից կանխագուշակումն արել ինչի մասին է այն լինելու:	Դասը սկսել՝<<Կանխագուշակումներ հենակետային բառերով>> մեթոդով:Գրատախտակին գրել ֆիլմիի վերնագիրը՝<<Արտավազդ II՝Պատիվը կյանքից վեր>>:	Աշակերտներնը, դատելով ֆիլմի վերնագրից կանխագուշակումներ են արել ինչի մասին է այն լինելու:	Զրույց, Կանխագուշակումներ հենակետայի ն բառերով
Իմաստի ընկալում **10-15**րոպե	Դիտել <<Արտավազդ II՝Պատիվը կյանքից վեր>>պատմավավերագրական ֆիլմը, վերլուծության հարցաթերթիկի հիման վրա գրառումներ անել	Լսելով և ամփոփելով նրանց մտքերը առաջարկել դիտել ֆիլմը:	**Վերլուծության հարցաթերթիկի հարցեր.** 1)Ո՞րն է ֆիլմի հիմնական գաղափարը 2)Ո՞ր ժամանակաշրջանի մասին է ֆիլմը, 3)Ո՞վքեր են	Ֆիլմի դիտում խմբային հետազոտություն, հարցադրումների մեթոդ,

			գլխավոր հերոսները: 4)Ֆիլմի ո՞ր հատվածից է բխում վերնագիրը, 5) Նշել 3 խնդիր, որ կարևորվում են ֆիլմում, 6) Նշել1-2բան, որը կարևոր և արդիական է 7)Հայաստանի համար: 8)Ֆիլմը ավելի շատ ազդեց ձեր բանականության թե զգացմունքների վրա:Ինչ զգացիք:	
Կշռադատում 15 րոպե	խմբի աշխատանքը (ֆիլմի վերլուծություն) ներկայացրեցին այն աշակերտները ,որոնց նկատմամբ պետք է իրականացներ հետազոտական	Ուսուցիչը այս փուլում ամրապնդում ամբողջացնում է հիմնական գաղափարները:	1)Ի՞նչ տվեց ձեզ այս ֆիլմը, որ չէր կարող տալ գրավոր սկզբնաղբյուրը: 2)Ֆիլմի հեղինակին ի՞նչ հարցեր կուղեք:	ֆիլմի վերլուծություն, կիսատ նախադասություն վարժություն

	աշխատանք			
Տնային աշխատանք 5 րոպե	**Տնային աշխատանքի հանձնարարում** <<Մեծ Հայքի թագավորությունն Արտավազդ II–ի օրոք>> դասը /էջ101-103/, Հայոց պատմության աշխատանքային տետրում դասից դուրս գրել ժամանակագրությունը, նոր անուններ և հասկացություններ:			

Վարդենիսի 2 հիմնական դպրոց

Դասապլան (Նմուշ 2)

Ուսուցիչ՝ Շ. ՀԱԿՈԲՅԱՆ

Առարկա՝	Հայոց Պատմություն	Ամսաթիվ	12.11.22	Կիսամյակ	1	Դասարան	6
Թեմա	Հայոց թագավորությունը անցումային շրջանում						
Օգտագործվող նյութեր	Դասագիրք, կավիճ, գրատախտակ, աշխատանքային տետր, ատլաս, (Բ. Հարությունյան, Ա մաս,)						
Դասի նպատակ	Նպաստել Մեծ Հայքում դրածո արքաների ու նրանց գործունեության վերաբերյալ գիտելիքների ձեռքբերմանը: Զարգացման ընթացքի հետ կապված կարևորն իրադարձությունները բացատրելու, նշանավոր փաստերն ու արքաներին համեմատելու, գնահատելու կարողությունների ձևավորմանը:						
	Ուսուցման արդյունքներ որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ:						
Վերջնարդյունքներ	Աշակերտը կկարողանա՝ • Վերլուծել իրավիճակը Հայաստանում Արտաշեսյան արքայատոհմի անկումից հետո: • Բացատրել, որ Հայաստանում հայոց գահին տիրելու համար, հարևան Հռոմի և Պարթևստանի միջև լուրջ պայքար էր ընթանում: • Կարծիք հայտնել այն մասին, թե ինչու է հայ ժողովուրդը Զենոնին անվանել Արտաշես: • Կապեր գտնել տվյալ ժամանակաշրջանի և արդի գործընթացների միջև:						
Գործողություն. Ժամ/ տրողություն	**Ուսումնական գործունեություն** **Աշակերտներ**	**Ուսումնական գործունեություն** **Ուսուցիչ**	**Հարցադրումներ**	**Կիրառվող մեթոդներ**			

3 րոպե	Ողջույն: Անհրաժեշտության դեպքում պատասխանում ուսուցչի հարցերին	Ողջույն, հաշվառում, դասի նախապատրաստում, տնային առաջադրանքների քննարկում:	Ի՞նչ անհասկանալի հարցեր ունեն անցած դասից:	
Խթանում 5-10 րոպե	Լսում են ուսուցչին, հարկ եղած դեպքում՝ հնչեցնում հարցեր:	Ներածական զրույցի միջոցով անցել նոր նյութի ուսումնասիրմանը: Դասագրքի տեքստը, ըստ ենթահարցերի, բաժանել համագործակցային փոքր խմբերին և առաջարկել ընթերցել, ընկալել, ըմբռնել դրանց բովանդակությունը:	Հռոմը ծրագրել էր նվաճել Հայաստանը և այն վերածել կայսերական նահանգի: Հայ ժողովուրդը դաշնակցեց պարթևների հետ ընդդեմ հռոմեացիների նվաճողական քաղաքականության:	Խմբային հետազոտություն,ներածական զրույց, հարցադրումների մեթոդ:

Իմաստի ընկալումը **10 րոպե**	Աշակերտները իրենց հանձնարարված ենթահարցերը ուսումնասիրում են քառաբաժան և պատմական հիշողության հինգ օղակ մեթոդական հնարների միջոցով:	Շրջում է դասարանում, հետևում խմբային համագործակցությա ն ընթացքին: Ուշադրություն դարձնում հետազոտվող աշակերտներին, ուղղորդում և օգնում դժվարացող աշակերտներին:	I խումբ-Իրավիճակը Հայաստանում առա ջին դարի կեսին: II խումբ –Հայոց արքա Աբգար: III խումբ –Պայքար Հռոմի դրածոների դեմ: IV խումբ –Հայերի դաշինքը պարթևների հետ:	Քառաբա-ժան, պատմական հիշողության հինգ օղակ, հարցադրումն երի մեթոդ:
Կշռադատում **15-20 րոպե**	Հետազոտվող աշակերտները ներկայացնում են իրենց խմբերի աշխատանքը դասարանին: Տեղից լրացումներ են կարում մյուս աշակերտները:	Լսում աշակերտներին: Ամրապնդում,ամբողջ ացնում է հիմնական գաղափարները: Կատարում անդրադարձ:	Ինչու՞ էին հայերը դաշնակցում պարթևների, այլ ոչ՝ հռոմեացիների:	Քննարկում: Դասի անդրադարձ Ես-Դու-Մենք վարժության միջոցով:
Տնային աշխատանք **5 րոպե**	**Տնային աշխատանքի հանձնարարում** **Հանձնարարել դասի 26**/էջ 209-113/ Դասից դուրս բերել նոր անունները և հասկացությունները: Գրել ժամանակագրությունը:			